

Կարծիք՝

Մարիամ Արթուրի Աղամյանի «Անզլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի լեզվաճանաչողական վերլուծություն» աշխատանքի վերաբերյալ

Ցեղակից լեզուների միջև լեզվական ցանկացած իրողության գուգադրական քննությունը կարևորվում է միջմշակութային հաղորդակցության շերտերը բացահայտելու, տարբեր լեզվակիր հանրությունների լեզվամտածողական կադապարները վեր հանելու, ինչպես նաև նրանց լեզվական քարտեզը բնութագրելու առումներով:

Միջմշակութային հարցադրումների դիտանկյունից էական նշանակություն ունի ցեղակից լեզուների բառիմաստային դաշտերի գուգադրական քննությունը՝ բառիմաստային-թեմատիկ խմբերի իմաստային ծավալները և նրանց համապատասխանությունները պարզաբանելու հիմնախնդիրը: Այդ առումով որոշակի արժեք է ներկայացնում «տարիք» իմաստային դաշտի լեզվաճանաչողական վերլուծությունը հայերենի և անզլերենի փաստական նյութի հիման վրա, որ կատարել է հայցորդ Մարիամ Աղամյանը՝ իր հետազոտությունը ներկայացնելով որպես թեկնածուականատենախոսություն:

Ցանկացած լեզվում հստակ տարրորոշված են տարիքային պարբերացման խնդիրները, որոնք «առնչվում է անձի՝ տարբեր ոլորտների համաչափ զարգացման, մանկավարժական, հոգեբանական, հասարակական-մշակութային հասունացման, ինչպես նաև իրավական, տնտեսական, բարոյական և ազգագրական գործոնների, սկզբունքների և ավանդույթների հետ»: Տարիքային պարբերացումները հասարակության անդամներին ճանաչելու, նրանց գնահատելու և ընկալելու նպատակադրում ունեն, ուստի և նրանցից յուրաքանչյուրին նույնականացնելու կարևորագույն միջոցներից են:

Տարիքային պարբերացումներն անշուշտ գործնականում կիրառելի են մարդու նկատմամբ. խնդիր, որ, ինչպես նշում է ատենախոսը, մշտապես եղել է փիլիսոփաների, վերլուծաբանների ուսումնասիրության կենտրոնում:

Ատենախոսության թեման՝ հայերենի և անզլերենի «տարիք» իմաստային դաշտի լեզվաճանաչողական վերլուծությունը, ընդհանուր լեզվաբանական նշանակություն ունենալով հանդերձ, վերաբերում է ճանաչողական լեզվաբանությանը և ժամանակակից

լեզվաբանական ուսմունքերի համատեքստում արծարծում է արդիկան խնդիրներ՝ հարցադրումները լուծելով ժամանակակից ճանաչողական լեզվաբանության սկզբունքներով, վեր հանելով լեզվակիր տարբեր հանրությունների ազգային լեզվամտածողությունների առանձնահատկությունները, ցույց տալով դրանց արտացոլումը գուգադրվող լեզուներում:

Ատենախոսը նպատակադրել է գուգադրական վերլուծության միջոցով ուսումնասիրել անգլերենի և հայերենի «տարիք» նշանակության իմաստային դաշտերը, ներկայացնել ուսումնասիրվող իմաստային դաշտերում առկա ներհամակարգային հարաբերությունները, ինչպես նաև վեր հանել դիտարկվող հասկացության լեզվամշակութային և հետևյալ խնդիրները՝ ներկայացնել «տարիք» հասկացության միջգլխակարգային բնույթը, տարիքային խմբերի ավանդական դասակարգումները, վերլուծել «սերունդների տեսությունը» և վերջինիս լեզվականացման առանձնահատկությունները, ըստ բացատրական բառարանների՝ դուրս բերել անգլերենի և հայերենի տարիք ցույց տվող միավորները, դասակարգել դրանք ըստ տարբեր գործոնների, առանձնացնել և ուսումնասիրել դրանցում առկա ենթախմբերը, դիտարկել տարիք ցույց տվող միավորների իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները գուգադրվող լեզուներում, ներկայացնել ուսումնասիրվող միավորների ոճական նշոյթավորվածությունը, ուսումնասիրել անգլերենի և հայերենի տարիք իմաստ արտահայտող բառերի լեզվաճանաչողական առանձնահատկությունները, վեր հանել անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի միավորների առաջացրած գուգորդումները և այլն:

Առաջադիր խնդիրների լուծման համար կիրառվել են լեզվաբանական հետազոտության *գուգադրական, տիպաբանական, նկարագրական, բաղադրիչային վերլուծության և հարցման* մեթոդները:

Ըստ այդմ, ատենախոսը ներկայացնում է «Տարիք» հասկացության ըմբռնումը տարբեր գիտություններում՝ փիլիսոփայություն, սոցիոլոգիայ հոգեբանություն, մանկավարժություն, կենսաբանություն և լեզվաբանություն, անդրադարձ է կատարվում տարիքին հարող «սերունդների տեսությանը», ներկայացվում է նաև տարիքային ավանդական դասակարգումները անգլոամերիկյան և հայկական լեզվամշակույթներում,

կատարվում է անզլերենի և հայերենի տարիք իմաստ արտահայտող բառային միավորների դասակարգում՝ ըստ տարիքային սանդղակների:

Զուգադրական վերլուծությամբ ատենախոսն արձանագրում է, որ հայերենում տարիք իմաստ արտահայտող միավորներն ավելի տարբերակված են, քան անզլերենում, ինչի մասին է վկայում տարիք արտահայտող միավորների թվային անհամապատասխանությունը՝ անզլ.՝ 69, հայ.՝ 119: Ատենախոսն այս տարբերությունը բացատրում է այն հանգամանքով որ ի տարբերություն հայկական մշակույթը կրողների, այսօրվա անզլամերիկյան հանրության համար մարդու տարիքի չափանիշը առաջնային չէ:

Երկրորդ գլխում բացահայտվում են «Տարիք» իմաստ արտահայտող բառային միավորների իմաստային առանձնահատկությունները դիտարկվող լեզուներում:

Կատարվում է շնորո առարկա դաշտի բառային միավորների իմաստների բաղադրիչային վերլուծություն. առանձնացվում են բառային տարբեր դասակարգումներ՝ ըստ որոշակի հիմունքների՝ ըստ որոշակի տարիքի իմաստի, ըստ իմաստային վերաբերելիության և ըստ կյանքի կոնկրետ փուլի կամ կոնկրետ վիճակի իմաստի:

Վերլուծության ընթացքում ատենախոսը եզրակացնում է, որ անզլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտերը համընկնում են իրենց միջուկային իմակներով, քանի որ լեզուներում արձանագրվել է ամենահաճախ հանդիպած իմակների համընկնում: Այս իմակների շարքում առկա *child / երեխա – young / երիտասարդ – old / ծեր* իմակները բավականին համապարփակ կերպով են արտահայտում տարիքային ողջ ցիկլը, քանի որ կարող են մատնանշել կյանքի հիմնական փուլերը:

Ատենախոսը կարևոր քայլ է կատարում՝ վեր հանելով գուգադրվող լեզվական միավորների թարգմանական յուրահատկությունները, որոնք առանձնացնում է հանդիպող պատճենման, ինչպես նաև համարժեք, նկարագրական և մոտավոր թարգմանությունների տեսակներով: Միաժամանակ ատենախոսը կարողացել է դուրս բերել թարգմանական այն բացերը, որոնք առկա են մտիջմշակութային հաղորդակցության ընթացքում. այսպես՝ *ահել/ահիլ, բյուրամյա, երկարարև, դեռաբողբոջ, դեռաբույս, դեռածաղիկ, տղայահասակ, ջահել-ջիվան, կանխահասակ, ծաղկահասակ, ծաղկատի, դեռածին, մատաղաբույս, մատաղածին, մատաղատի, նորածիլ* և այլ միավորներ անզլերենում չունեն իրենց համարժեքները:

Երրորդ գլում արծարծվում են անզլամերիկյան և հայկական լեզվամշակույթների առանձնահատկությունները: Այս գլխում ատենախոսն այն կարծիքն է հայտնում, որ և՛ անզլամերիկյան, և՛ հայկական մշակույթների կրողներն իրենց զուգորդումներում հիմնականում օգտագործել են բացատրական սահմանումներ, ինչը կարելի է հիմնավորել նրանով, որ, ինչպես «տարիք» իմաստային դաշտում ընդգրկված բոլոր միավորները, այնպես էլ աշխարհում ամեն ինչ կարելի է հեշտությամբ ներկայացնել բացատրական նկարագրություններով և ծավալուն նախադասություններով, քանբառական միավորներով: տենախոսը եզրակացնում է, որ երկու լեզվամշակույթներում էլ բացատրական սահմանումը բավականին բնորոշն է *girl աղջիկ (Young female child. A human, who biologically is female / իգական սեռի ներկայացուցիչ)* և *boy / տղա (Young male child. Male not fully developed, young. A human, who biologically is male/ արական սեռի ներկայացուցիչ)* միավորներին:

Ատենախոսը, ամփոփելով քննության արդյունքները, եզրակացնում է, որ անզլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի լեզվաճանաչողական վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել երկու լեզուների փաստական նյութի ընդհանրությունները՝ մի կողմից, և յուրահատկությունները՝ մյուս կողմից, որոնք պայմանավորված են լեզվակիրների տարբեր հանրությունների աշխարհայացքներով, ազգային մտածելակերպով, լեզվամշակույթով:

Ատենախոսությունն ունի տեսական ու գործնական նշանակություն. տեսակա- նորեն այն որոշակի ներդրում է առհասարակ իմաստային դաշտի տեսության շրջանակում. այն ևս մեկ փորձ է ամփոփ ներկայացնելու զուգադրվող լեզուների «տարիք» իմաստային դաշտի լեզվական նյութը՝ իմաստաբանական, բառակազմական, թարգմանական, լեզվամշակութային և հոգելեզվաբանական հարցադրումների տեսանկյուններից:

Աշխատանքի գործնական արժեքն այն է, որ ատենախոսության արդյունքները կարելի է օգտագործել անզլերենի և հայերենի զուգադրական տիպաբանության և բառագիտության դասընթացներում:

Ատենախոսության արժանիքներից է այն, որ աշխատանքի վերջում տրված են հավելվածներ, որտեղ զետեղված են անզլերենի և հայերենի՝ տարիք նշանակող բառացանկեր՝ համապատասխան իմաստային բացատրություններով:

Ատենախոսության փաստական նյութի քննության և առարկայի բաղադրիչների ներառման առումներով դիտարկումներ չունենք, սակայն, կարծում ենք, հետևալ հարցարդյուններն ուշադրության արժանի են:

Ա) Հայտնի է, որ լեզուներում, այդ թվում նաև անգլերենում և հայերենում, կան «տարիք» հասկացության իմաստն արտահայտող կառուցվածքներ, որոնց զուգադրական քննությունը կարող է որոշակի գաղափար տալ լեզվակիր տարբեր հանրությունների մոտեցումների և ընկալումների մասին: Ինչպես, անգլերենում՝

1. Act one's age (to be mature and not childish).
2. Come of age (the phrase come of age means to reach adulthood).
3. Coon's age (the idiom a coon's age refers to a very long period of time).
4. Feel your age (the phrase feel your age means to realize that you are growing old).
5. Get on in years (advanced in age).
6. Golden age (period of prosperity).
7. I wasn't born yesterday (If you say you 'I wasn't born yesterday' you mean that you are not stupid enough to believe anything said to you).
8. In a coon's age (the phrase in a coon's age means in a very long time).
9. Life begins at 40 (the phrase life begins at 40 means that when one reaches the age of forty, life becomes better, maybe because one has the skills, experiences, and means necessary for an enjoyable life).

Բ) Հայերենում որոշ դարձվածքներ նույնպես կարող են արտահայտել «տարիք, ժամանակային տարիք» իմաստներ, ինչպես՝ *առաջացած տարիք* (ծերություն, զառամություն), *տարիքն առած* (ծերացած, զառամած), *ձվից նոր դուրս եկած* (հազիվ չափահաս դարձած), *մազերն սպիտակել* // - *ճերմակել* // - *ին ճերմակ նստել* // - *ին ձյուն նստել*՝ *դնել* // *մազերն արծաթել* // *մազ-մորուքն սպիտակած* (ալեհեր դառնալ, ծերանալ) և այլն:

Հետաքրքիր է՝ այս կարգի արտահայտություններն ինչպես են մտել անգլոամերիկյան լեզվամշակույթ և ինչպես են արտահայտվում թարգմանական գրականության մեջ:

Մենք ատենախոսի ուշադրությունը սևեռում ենք այս հարցերի շուրջ, որպեսզի հետագա աշխատանքի ընթացքում դրանք նկատի ունենա: Այն, ինչ կատարել է հացորդ


Մ. Աղամյանը, մշակութային լեզվաբանության ոլորտի գիտական ուսումնասիրության հաջողված փորձ է, որ արժանի է բարձր գնահատականի:

Նկատենք՝ սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը, իսկ հրապարակված հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարող ենք ասել, որ Աղամյան Մարիամ Արթուրի «Անզլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի լեզվաճանաչողական վերլուծություն» աշխատանքն ունի լեզվաբանական կարևոր նշանակություն, որ պայմանավորված է նրա գիտական ղեկավարի՝ պրոֆ. Կ. Աբրահամյանի հոգատար, միաժամանակ խստապահանջ վերաբերմունքով:

Հայցորդ Մ. Աղամյանի ատենախոսությունն առաջադիր հարցադրումների շրջանակներով, դրանք վերլուծելու գիտականությամբ, շարադրանքի պատշաճ ոճով, ինչպես նաև տեսական ու գործնական կարևոր նշանակություններով բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին՝ «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» ժ.02.02. մասնագիտությամբ, ուստի միջնորդում ենք Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 019 մասնագիտական խորհրդի առջև՝ նրա հեղինակին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

 Լ. Խաչատրյան

Լ. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ.

ՀՊՄՀ գիտքարտուղար
Մանկ. գիտ թեկնածու, դոցենտ

(Մ. Իսպիրյան)

15.11.2022